

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 2
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ. նոյեմբերի 29-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում
Զեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի պետ Լ.Զիլֆուղարյան
2. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում
Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան
3. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփում
Զեկուցող՝ Լ.Զիլֆուղարյան
4. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Հայկ Սեյրանի Կեսոյանի «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
5. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Հասմիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
6. Ընթացիկ հարց: Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտներ Արման Գրիգորի Ստեփանյանի և Թամարա Հակոբի Բադալյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
7. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի 1723 և 1620 թողարկման վերականգնված մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան
8. Ընթացիկ հարց: «Ինտելեկտուալ գործունեությամբ զբաղվող անձանց գործառությանն ու հոգեհուգական կարգավիճակի առանձնահատկությունները դեսինխրոնոզի և սթրես-ռեակցիայի պայմաններում» թեման Գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ-ՀՀԲՀՀ - 2018» մրցույթին երաշխավորվու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան
9. Ընթացիկ հարց: Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ. Աղուզումցյանի, Լ. Պետրոսյանի, Ս. Պողոսյանի և Ա. Խաչատրյանի «Կառավարչական գործունեության հոգեբանություն. գիտահետազոտական աշխատանքներ 2014-2018» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

10. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սոնա Պողոսյանին ԺԹ.00.00 «Հոգեբանություն» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:
Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

1. **Լսեցին՝** Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ասպիրանտուրայի բաժնի պետ Նաիրա Ղազարյանը գտնվում էր արձակուրդում, բաժնի պետի պաշտոնակատար Ավետիս Գևորգյանը ներկայացրեց ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը (կից ներկայացվում է հաշվետվությունը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Գևորգյանը:

Որոշեցին՝ Ասպիրանտուրայի 2018 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքներն ընդունելի գիտություն:

2. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ Չատինյան

Զեկուցողը նշեց, որ 2018-2019 ուսումնական տարվա մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմել են են 172 հոգի, որոնցից մրցույթը հաղթահարել են 130-ը: Այնուհետև նշեց ըստ մասնագիտությունների ընդունվածների թիվը և առկայից հեռակա տեղափոխվածների ընդհանուր թիվը (կից ներկայացվում է պրոռեկտոր Գ.Չատինյանի հաշվետվությունը՝ 2018-2019 ուսումնական տարվա մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելության արդյունքների վերաբերյալ):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունելի գիտություն:

3. **Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Զեկուցողը խնդրեց հարցը քննարկել դեկտեմբերի գիտական խորհրդի նիստին, քանի որ այս պահին ամփոփման աշխատանքները դեռ չեն ավարտվել:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Գ.Չատինյանը

Որոշեցին՝ Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը քննարկել դեկտեմբերի գիտական խորհրդի նիստին:

4. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Հայկ Կեսոյանի «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2018թ. նոյեմբերի 15-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Հայկ Սեյրանի Կեսոյանի «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Հայկ Սեյրանի Կեսոյանի «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Հ.Ստեփանյանը:

Որոշեցին՝ Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Հայկ Սեյրանի Կեսոյանի «Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Հասմիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2018թ. նոյեմբերի 15-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է Իրավագիտության ամբիոնի հայցորդ Հասմիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝ Իրավագիտության ամբիոնի հայցորդ Հասմիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համակարգում» վերտառությամբ, փոփոխել «Դատական իշխանության անկախության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Գ.Չատինյանը, Ա.Եզեկյանը, Հ.Ստեփանյանը:

Որոշեցին՝ Իրավագիտության ամբիոնի հայցորդ Հասմիկ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համակարգում» վերտառությամբ, փոփոխել «Դատական իշխանության անկախության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

6.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտներ Արման Գրիգորի Ստեփանյանի և Թամարա Հակոբի Բադալյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2018թ. նոյեմբերի 15-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտներ Արման Գրիգորի Ստեփանյանի և Թամարա Հակոբի Բադալյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝

1. Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ Արման Գրիգորի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մահմանադրական մշտադիտարկման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանադրական կարգավորումների

համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանին:

2. Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ Թամարա Հակոբի Բադայանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների և պարտականությունների սահմանադրաիրավական կարգավորումը Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում (համեմատական վերլուծություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.Նեվինսկիյին (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Չատինյանը:

Որոշեցին՝

1. Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ Արման Գրիգորի Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Սահմանադրական մշտադիտարկման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ սահմանադրական կարգավորումների համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանին:

2. Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ Թամարա Հակոբի Բադայանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մարդու և քաղաքացու անձնական իրավունքների և պարտականությունների սահմանադրաիրավական կարգավորումը Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում (համեմատական վերլուծություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ.Նեվինսկիյին (կից ներկայացվում է ամբիոնի քաղվածքը):

7.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի 1723 և 1620 թողարկման վերականգնված մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Ջեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան

Ջեկուցողը նշեց, որ Կառավարման ամբիոնում 2018թ. նոյեմբերի 22-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է 1723 և 1620 թողարկման վերականգնված մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը: Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ առաջարկում է՝

1. Կառավարման ամբիոնի 1723 թողարկման վերականգնված մագիստրանտ Դավիթ Ռաֆիկի Պետրոսյանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության հանրային քաղաքականության արդիականացման հիմնախնդիրները» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մամիկոնի Մարգարյանին:

2. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Հրանտ Յուլակի Դանդյանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Ընդերքօգտագործման պետական կարգավորման բնապահպանական հիմնախնդիրները (ՀՀ հանքարդյունաբերության օրինակով)» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների թեկնածու Գրիշա Մեխակի Գսպոյանին:

3. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Արման Շուրայի Դանիելյանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Արտաքին տնտեսական կապերի կառավարման խնդիրները ԵՍՏՄ անդամակցության համատեքստում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Նորայրի Մանասերյանին:

4. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Մերի Գեղամի Մուրադյանի մագիստրոսական թեզի հաստատել «ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ոլորտային տեղաշարժերի միտումները և հիմնախնդիրները» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արսեն Ժորայի Եղիկյանին (կից ներկայացվում է ամբիոնի նիստի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Լ.Զիլֆուղարյանը, Վ.Խաչատրյանը:

Որոշեցին՝

1. Կառավարման ամբիոնի 1723 թողարկման վերականգնված մագիստրանտ Դավիթ Ռաֆիկի Պետրոսյանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության հանրային քաղաքականության արդիականացման հիմնախնդիրները» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Սարիամ Մամիկոնի Մարգարյանին:

2. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Հրանտ Ցոլակի Դանդայանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Ընդերքօգտագործման պետական կարգավորման բնապահպանական հիմնախնդիրները (ՀՀ հանքարդյունաբերության օրինակով)» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների թեկնածու Գրիշա Մեխակի Գսպոյանին:

3. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Արման Շուրայի Դանիելյանի մագիստրոսական թեզի թեման հաստատել «Արտաքին տնտեսական կապերի կառավարման խնդիրները ԵՍՏՄ անդամակցության համատեքստում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Նորայրի Մանասերյանին:

4. Կառավարման ամբիոնի 1620 թողարկման վերականգնված մագիստրանտ Մերի Գեղամի Մուրադյանի մագիստրոսական թեզի հաստատել «ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ոլորտային տեղաշարժերի միտումները և հիմնախնդիրները» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արսեն Ժորայի Եղիկյանին (կից ներկայացվում է ամբիոնի նիստի քաղվածքը):

8. Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Ինտելեկտուալ գործունեությամբ զբաղվող անձանց գործառնությանն ու հոգեհուզական կարգավիճակի առանձնահատկությունները դեսինխրոնոզի և սթրես-ռեակցիայի պայմաններում» թեման Գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ-ՀՀԲՀՀ - 2018» մրցույթին երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

Զեկուցողը ներկայացրեց Կառավարման հոգեբանության ամբիոնի 2018թ. նոյեմբերի 20-ին կայացած նիստի որոշումը (կից ներկայացվում է ամբիոնի նիստի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ռ.Աղուզումցյանը:

Որոշեցին՝ «Ինտելեկտուալ գործունեությամբ զբաղվող անձանց գործառնությանն ու հոգեհուզական կարգավիճակի առանձնահատկությունները դեսինխրոնոզի և սթրես-ռեակցիայի պայմաններում» թեման երաշխավորել Գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ-ՀՀԲՀՀ - 2018» մրցույթին:

9. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ. Աղուզումցյանի, Լ. Պետրոսյանի, Ս. Պողոսյանի և Ա. Խաչատրյանի «Կառավարչական գործունեության հոգեբանություն. գիտահետազոտական աշխատանքներ 2014-2018» գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

Զեկուցողը ներկայացրեց Կառավարման հոգեբանության ամբիոնի 2018թ. նոյեմբերի 20-ին կայացած նիստի որոշումը (կից ներկայացվում է ամբիոնի նիստի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Վ.Խաչատրյանը:

Որոշեցին՝ Կառավարչական գործունեության հոգեբանություն գ/հ լաբորատորիայի ֆինանսական նախահաշվով նախատեսված Ռ. Աղուզումցյանի, Լ. Պետրոսյանի, Ս. Պողոսյանի և Ա. Խաչատրյանի «Կառավարչական գործունեության հոգեբանություն. գիտահետազոտական աշխատանքներ 2014-2018» գիրքը երաշխավորել տպագրության:

10. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սոնա Հրայրի Պողոսյանին ԺԹ.00.00-«Հոգեբանություն» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սոնա Հրայրի Պողոսյան ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Սոնա Պողոսյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2015թվականին: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանությունից հետո հրատարակել է 1 մեթոդական ուղեցույց, 5 գիտական հոդված, համահեղինակությամբ՝ 2 կոլեկտիվ մենագրություն, 2 մեթոդական ուղեցույց, 6 գիտական հոդված:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ունի գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ: 2014թ փետրվարից առ այսօր աշխատում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիա- ծրագրում որպես գիտաշխատող: 2015 թվականի սեպտեմբերից մինչև 2018թ. հուլիսը աշխատել է Կառավարման հոգեբանության ամբիոնում որպես ժամավճարային հիմունքներով դասախոս, 2018թ. սեպտեմբերից աշխատում է Կառավարման հոգեբանության ամբիոնում որպես ասիստենտ: Դասավանդում է «Հոգեբանական ինքնակարգավորման մեթոդներ», «Ստեղծարար կառավարում», «Խմբային գործունեության հոգեբանական կառավարում» և «Իրավաբանական հոգեբանություն» առարկաները, ղեկավարում և գրախոսում է մագիստրոսական թեզեր: ՀՀ ԲՈԿ-ի կողմից 2017 թ. թույլատրվել է ղեկավարել թեկնածուական ատենախոսություններ: Ներկայումս ղեկավարում է թվով 3 թեկնածուական ատենախոսություն:

Արտահայտվեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանը նշեց, որ Սոնա Պողոսյանը որպես ամբիոնի դասախոս ակտիվորեն մասնակցում է ամբիոնում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին:

Սոնա Պողոսյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Մանե Սավթայան՝ անդամ
3. Վիլեն Խաչատրյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով գիտական խորհրդի նիստի գաղտնի քվեարկության արդյունքները (նիստին մասնակցել են գիտական խորհրդի 24 անդամներից 20-ը, որից ներկայացված հարցին կողմ են քվեարկել՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0) և հաշվի առնելով, որ Կառավարման հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Սոնա Հրայրի Պողոսյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Սոնա Հրայրի Պողոսյանի շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԺԹ.00.00 «Հոգեբանություն» մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու սույն որոշումը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
29 նոյեմբերի 2018թ.

Կ.Տ.